



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 17 » 11 2014թ.
ք. Երևան

N 466-Ղ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔՈՒՄ ՏԵՂԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 26-ի N 1521-Ն որոշմամբ հաստատված հնտերնետ ցանցում պետական մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող նվազագույն պահանջների 7-րդ կետի.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության պաշտոնական կայքում տեղադրվող տեղեկատվության բովանդակությունը՝ համաձայն հավելվածի.

2. Պաշտոնական կայքում տեղադրվող տեղեկատվությունը հրապարակվում է պարտադիր հայերենով և/իսկ ռուսերենով, անգլերենով՝ ըստ հնարավորության:

3. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության պաշտոնական կայքում տեղեկատվության բովանդակության տեղադրման համար պատասխանատու ստորաբաժանում սահմանել նախարարության աշխատակազմի հասարակության հետ կապերի բաժինը:

4. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի ղեկավարին:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐ**

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

« 17 » 11 2014թ.
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔՈՒՄ ՏԵՂԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության պաշտոնական կայքում տեղադրվում է տեղեկատվություն հետևյալ բովանդակությամբ.

1. «Ստրանսպորտի և կապի նախարարության (այսուհետ՝ նախարարության) ստեղծման պատմությունը, կառուցվածքը և գրաֆիկական պատկերը, հիմնական խնդիրներն ու գործառույթները, կառուցվածքային և (կամ) առանձնացված ստորաբաժանումների, իր ենթակայության մարմինների խնդիրներն ու գործառույթները, գտնվելու վայրերը, ղեկավար կազմի կամ տեղեկատուի հեռախոսահամարները, տվյալ պետական մարմնի կառուցվածքային և (կամ) առանձնացված ստորաբաժանումների, իր ենթակայության մարմինների մասին տեղեկատվություն (գտնվելու վայրը, ղեկավար կազմի և տեղեկատուի հեռախոսահամարները, խնդիրները և գործառույթները, կազմակերպության ստեղծման, վերակազմակերպման և լուծարման, ինչպես նաև հիմնական գործունեության մասին).

2. նորմատիվ այն ակտերը կամ դրանց կատարվող հղումները, որոնցով կարգավորվում է Նախարարության գործունեությունը, որոնք ընդունվել են Նախարարության կողմից և (կամ) որևէ այլ կերպ վերաբերում են Նախարարության, ինչպես նաև որոնման գործառույթի առկայությունը.

3. տեղեկություններ ազգային ծրագրերի իրականացմանը մասնակցության մասին (ծրագրերի ցանկը, որոնց մասնակցում է Նախարարությունը, տեղեկություններ ազգային ծրագրերի իրականացման շրջանակներում անցկացվող միջոցառումների մասին, տեղեկություններ (հաշվետվություններ) ազգային ծրագրերի իրականացման մասին).

4. տեղեկություններ Նախարարության իրավասության ոլորտում արտակարգ իրավիճակների կանխարգելման և վերացման միջոցառումների մասին.

5. Նախարարության իրավասությունների սահմաններում իրականացված պետական փորձաքննությունների մասին տեղեկատվություն.

6. Նախարարության կողմից մշակվող և հանրային քննարկմանը ներկայացվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի և դրանց հիմնավորումների մասին տեղեկատվություն.

7. Նախարարություն գործունեության վերաբերյալ հաշվետվություններ, զեկույցներ և այլ տեղեկատվական հոդվածներ.

8. Նախարարություն ներկայացվող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված դիմումների, տեղեկատվություն

ստանալու մասին հարցումների և այլ փաստաթղթերի օրինակելի ձևերը, դրանց լրացման վերաբերյալ ցուցումները, ինչպես նաև պաշտոնատար անձանց գործողությունների (անգործությունների) վարչական և քրեական կարգով վիճարկման կարգը.

9. թափուր պաշտոն գրաղեցնելու մասին տեղեկությունները՝ թափուր պաշտոնների ցանկը, դրանց ներկայացվող պահանջները, աշխատանքի ընդունման կարգը, մրցույթի արդյունքները և դրանց բողոքարկման կարգը կամ հղում համապատասխան մարմնի պաշտոնական կայքին.

10. պաշտոնական միջոցառումների կազմակերպման և միջոցառումների ժամանակ ընդունված որոշումների մասին տեղեկությունները, որոնք կազմակերպվում են Նախարարության կողմից (նիստեր, ընդունելություններ, մամուլի ասուլիսներ, կոլեգիաներ և այլն).

11. Նախարարության պաշտոնատար անձանց և պաշտոնական պատվիրակությունների այցերի և աշխատանքային գործուղումների մասին տեղեկությունները՝ Նախարարի թույլտվությամբ, պաշտոնական հայտարարությունների և ելույթների տեքստերը, որոնք հրապարակվում են Նախարարության կողմից.

12. խորհրդատվական մարմինների կազմի և ընդունված որոշումների մասին տեղեկատվությունը.

13. Նախարարության կողմից կամ Նախարարությունում իրականացված ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքների մասին տեղեկությունները և (կամ) հղումը.

14. Նախարարության տվյալ ոլորտի գործունեության հիմնական ցուցանիշների և պաշտոնական վիճակագրության մասին տեղեկությունները կամ հղում համապատասխան մարմնի պաշտոնական կայքին.

15. Նախարարություն գործող տվյալների շտեմարանների, ռեգիստրների և ընդհանուր օգտագործման տեղեկատվական համակարգերից, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվող տեղեկատվական ռեսուրսների ու ծառայությունների ցանկը և դրանից օգտվելու հրահանգները.

16. Նախարարության կողմից միջազգային և տեղական կազմակերպությունների հետ համագործակցության, ինչպես նաև միջազգային պայմանագրերի մասին տեղեկությունները.

17. բարձրաստիճան պաշտոնատար անձանց, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների անունները, ազգանունները, պաշտոնը, կենսագրությունը, էլեկտրոնային փոստի հասցեները և իրավասությունների նկարագիրը.

18. հասարակական միջոցառումների ծրագրերը.

19. ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների, տեղեկատվություն ստանալու մասին հարցումների վերլուծությունը.

20. պետական տուրքի և գանձման ենթակա վճարների վճարման ռեկվիզիտները.

21. քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը և վայրը.

22. նախարարության կայքում տեղադրված տեղեկությունները պարզաբանելու հասարակության հետ կապի բաժնի՝ իրավասություն ունեցող անձի կոնտակտային տվյալները.

23. հղումներ պետական կառավարչական մարմինների, Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության կառավարության և, առկայության դեպքում, նաև իր ենթակայության մարմինների պաշտոնական կայքերին.

24. Նախարարության կոնտակտային տվյալները՝ հասցեի քարտեզային պատկերը, փոստի հասցեն, էլեկտրոնային փոստի հասցեն, ինտերնետային կայքի հասցեն, հեռախոսահամարները, ֆաքսը.

25. Նախարարության կողմից մատուցվող առցանց ծառայության (ծառայությունների) մասին տեղեկատվություն.

26. տվյալ տարում Նախարարության գործունեության ապահովման համար հատկացված բյուջետային միջոցների ընդհանուր գումարի և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարողականի մասին.

27. մրցույթների անցկացման և կնքված պետական պայմանագրերի մասին տեղեկատվություն, ինչպես նաև հղում Հայաստանի Հանրապետության այն պաշտոնական կայքին, որտեղ տեղադրված տեղեկությունները.

28. «հաճախակի տրվող հարցերի» մասին տեղեկությունը:

29. նախարարության պաշտոնական կայքում կարող է տեղադրվել այլ լրացուցիչ տեղեկություն: